



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

**ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՄԱՅՐԳԱՐԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ
 ՑԱԽԱԿՑԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՊՈՒՏՈՍԻՆ**

Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի մահուան առիթով, Լոս Անճելըսի Հայաստանի հիւպատոսարանը Չորեքշաբթի, 28 Մարտին յատուկ տոմար մը բացած էր ցաւակցական ընդունելութեանց համար:

Արեւմտեան Թեմի Կրօնական Ժողովի ատենապետ Գերայ. Միւռն Տ. Վրդ. Ազնիկեան եւ Ազգ. Վարչութեան փոխ ատենապետ Տոքթ. Յակոբ Տէր Սկրտիչեան Չորեքշաբթի կեսօրին այցելեցին հիւպատոսարան եւ ընդունուեցան գլխաւոր հիւպատոս Արմէն Լոլոյեանի ու հիւպատոսարանի անձնակազմի անդամներուն կողմէ: Անոնք յանուն Թեմիս Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, Հոգեւորականաց Դասուն, Ազգային Վարչութեան, Ժողովականութեան եւ կրթական համակարգին՝ ցաւակցութիւն յայտնեցին վարչապետին մահուան առիթով, խնդրելով, որ այս զգացումները փոխանցուին հայրենի իշխանութեանց ու հանգուցեալի ընտանեկան պարագաներուն: Անոնք նաեւ այս իմաստովը արձանագրութիւն պահեցին յատուկ տոմարին մէջ:

Յայտնենք, որ վարչապետ Ա. Մարգարեանի մահուան առիթով, Ազգ. Առաջնորդարանի դիւանը յանուն Առաջնորդ Սրբազանին եւ Ժողովականութեան, ցաւակցական գիր մը ուղղած էր Հայաստանի գլխաւոր հիւպատոսին:

Այս տիւրը առիթով, յառաջիկայ Կիրակի, 1 Ապրիլին, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ Տէր Ողորմիայի արարողութիւն պիտի կատարուի ի յիշատակ հանգուցեալ վարչապետին:

ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

**CONDOLENCE VISIT TO THE ARMENIAN CONSULATE FOLLOWING
 THE DEATH OF PRIME MINISTER ANTRANIK MARGARIAN**

The Consulate General of Armenia in Los Angeles designated Wednesday, March 28, to accepting condolences on the death of Prime Minister Andranik Margarian.

Prelacy Religious Council Chair Very Rev. Fr. Muron Aznikian and Executive Council Vice-Chair Dr. Hagop Der Megerdichian visited the Consulate on Wednesday afternoon, where they were met by Consul General Armen Liloyan and Consulate officials, and expressed condolences on behalf of H.E. Archbishop Moushegh

Mardirossian, Prelate, as well as Prelacy Clergy, Executive Council, delegates, and educational institutions. They also requested that the Consul General convey their sympathies to the leadership of Armenia and to the late Prime Minister's family. Upon departing, the Prelacy representatives also signed the condolence book.

Earlier in the week, upon hearing the sad news of Prime Minister Margarian's death, a letter of condolence was sent to the Consul General on behalf of the Prelate and Religious and Executive Councils.

On Sunday, April 1st, special prayers will be offered in all Prelacy Churches in memory of the Prime Minister.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](#) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to info@westernprelacy.org, Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.